Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՀՈԳՈՒ ՑԱՎԱԳԻՆ ՃԻՉԸ

... Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը նրան և միայն նրան մեծարեց «Պատմահայր» և «Եռամեծն վարդապետ Մովսես» բնութագրականներով: Եվ հաջորդած տասնևհինգ դարերը եկան ոչ միայն հավաստելու աննախադեպ այդ գնահատականի իրավացիությունը, այլև չխամրող փառքի ու անմահության նորանոր հավաստումներ ավելացրեցին Պատմահայր Մովսես վարդապետ Խորենացու անվանը: Սկսած 1685 թվա–կանից, երբ Ամստերդամում Թովմաս Վանանդեցին գրաբարով «ի տիպ արձանացուցեց» Պատմահոր գլուխգործոցը՝ «Պատմութիւն Հայոց» քերթությունը և 1736 թվականից, երբ Լոնդոնում Վիլհելմ և Գևորգ Վիստոն եղբայրները լատիներեն թարգմանությամբ այն ներ–կայացրեցին համայն Եվրոպային, – սկսվեց Մովսես վարդապետ Խորենացու և նրա քեր–թության հաղթական երթը նախ՝ ամբողջ Եվրոպայով, ապա և համայն աշխարհով, խան–դաղատալից մեծարման, չթաքցված հիացմունքի ու անսքող խանդավառության նորանոր հիացական գնահատականներ կորզելով մասնագետ-հայագետների շուրթերից:

Այս՛, ինքնատիպ ու եզակի էր Մովսես վարդապետ Խորենացու համբավավոր «Պատմութիւն հայոց»-ը, առավել սակայն ինքնատիպ էր նրա յուրօրինակ ավարտաբա–նությունը: Ի կտրուկ հակադրություն բոլոր հին ու նոր պատմիչների, որոնք իրենց քերթ–վածքն ավարտում էին «աղյուսակք ժամանակագրանք»-ներով, կամ «Առ ընթերցողս» ուղղված այլևայլ հորդոր-խնդրանքներով, կամ համառոտիվ շարադրում էին իրենց քերթ–վածքի գրության շարժառիթն ու սատարած ազգային երևելիներին, Մովսես Խորենացին իր «Պատմութիւն հայոց»-ը ավարտել է յուրահատուկ մի գլուխ-ամփոփումով, որն ունի ոչ պակաս յուրահատուկ մի անվանում՝ «Ողբ...»: Այն արյուն-լեղիու մի ժայթքում է, հոգեկան ծանրագույն խռովք ապրող ազգասերի սրտակեղեք պոռթկում, ավար ու ավեր դարձած հայրենիքի համար մորմոքվող սրտի ցավագին ճիչ: Քանզի իր պաշտելի Հայաստան աշ–խարհում «վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց հավա–տի ճշմարտությունը, տգիտությամբ հիմնավորվեց չարափառությունը»: Այս է հայրենի երկրի անագորույն վիճակը: Եվ ցավագին կերպով ծագող «ինչո՞ւ» հարցի հա–մար,Պատմահայրը երկարատև ու տվայտալից մտածումներից հետո, իր համար հստակել է պատասխանը. ավա՜ղ, նույնքան մռայլաբույր, նույնքան արյուն ու լեղի: Որովհետև՝ «ուսուցիչները տխմար ու ինքնահավան, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով, ոսկեսեր, նախանաձոտ, թողած հեզությունը», որովհետև «գործավորները հպարտ, դատարկախոս,

ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առնտուր և զազրաբա–նություններ սիրող», որովհետև «Աշակերտները սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ ուսում չստացած՝ աստվածաբաններ են», որովհետև «աշխարհա–կան այրերը ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, գինարբուք–ներ սիրող, վնասագործ», որովհետև...

Ազնիվ հայրենասերի հզոր ներքին լիցք պետք է ունենալ հայ ժողովրդին նվիրված ու նրա անցած ճանապարհը հպարտությամբ մատենագրող «Պամութիւն հայոց» քերթվածքը այսպիսի շեշտակի վերջաբանությամբ ավարտելու համար և քաղաքացիական անսահման քաջություն պետք է ունենալ՝ հայրենի երկրի այս դառը իրավիճակը երկյուղածորեն քո–ղարկելու փոխարեն, այն որպես թարախոտ խոց բանալու, սերունդների դատին ու քննու–թյանը հանձնելու համար: Եվ Մովսես վարդապետ Խորենացին արեց այդ: Արեց, որովհետև հիանալի գիտեր, որ ինչպես իր «Պատմութիւն հայոց»-ը, այնպես էլ «Ողբը» գրված են դա–րերի ու հազարամյակների համար, և որ նրանք տիրականորեն անցնելու են ժամանակի ու տարածության՝ մարդկության համար ընդունված ու ճանաչված բոլոր սահմանները և ուրեմն չեն հնանալու երբեք և ոչ մի ժամանակ, ընդհուպ մինչև այսօր ու մեր օրերը:

Մինչև այսօր...

Մասնագիտական ու գրական-մատենագիտական խորանիստ գիտելիքներ պետք չեն նկատելու համար, որ Մովսես վարդապետ Խորենացու ցավագին «Ողբ»-ը այսօր էլ մնում է թարմ ու առօրեական, այսօր էլ չի կորցրել մեր ժամանակի հետ իր համահնչու–նությունը: Որովհետև այսօր էլ մեր ազգային ցավերն ու վշտերը ծնող հասարակական-քա–ղաքական շարժառիթները մնում են նույնը, որովհետև այսօր էլ չկարողացանք պահան–ջատերը լինել, թեկուզ և մի փոքր մասին այն ամենի, ինչ բոլոր օրենքների ու օրինաչափու–թյունների համաձայն մեզ է պատկանում, որովհետև այսօր էլ մեր ազգային, քաղաքական-հասարակական առողջ ու հաստատահիմն երևակումների շարքում, իրենց ամենևին էլ փոքր փայափաժինը չունեն գավառամիտ հայրենասիրությունը, մտավորական տհասու–թյունը, ամբարտավան գիտոսիկությունը, ազգային դատարկապորտությունն իր վտանգա–վոր հետևանքներով, պռատ ու պոռոտ տրամաբանության արգասիք հանդիսացող այլևայլ «ազգափրկիչ» տեսությունները: Պատմահոր «Ողբի»՝ վերևում բերված ասույթներից և ո՞ր մեկը այսօր իր լիակատար հիմնավորվածությամբ չի հնչում մեր պայմաններում և մեր իրականության համար, չնայած որ այն գրվել է շուրջ 1500 տարի առաջ: Եվ հենց այսօրվա

համար չի՞ գրել Խորենացին իր «Ողբի» հետևյալ տողերը. «Որովհետև մեզ տիրեցին խստա–սիրտ ու չար թագավորներ, որոնք մեզ վրա ծանր, դժվարակիր բեռներ էին բարձում և անտանելի հրամաններ են տալիս: Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած ... կարևոր մարդիկ ներկալվում են, հայտնի անձերը բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականներ, ան–թիվ նեղություններ են կրում ռամիկները»:

Այսպիսի վկայակոչումներ Մովսես վարդապետ Խորենացու «Ողբից» կարելի է էլի բերել, սակայն կարծում ենք, ասվածն էլ բավական է պնդելու հիմք ունենալու համար, որ Պատմահոր «Պատմութիւն հայոցի» ավարտաբանությունը հանդիսացող «Ողբը» ասես թե արդյունքը լինելով նրա հեղինակի մի ինքնատիպ ներքին հայտնատեսության, կարծես իր մեջ իրավաբանորեն խտացրել է մեր Հայաստան աշխարհում ծավալված վերջին շրջանի դեպքերն ու հասարակական-ազգային իրադարձությունները և ուրեմն որպես ինքնատիպ մի փաստաթուղթ, անպայման արժանի է առանձնակի ուշադրության ու վերաբերմունքի:

Մովսես Խորենացի, Ողբ, Երևան, 1991

Առաջաբան